

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ (ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ) ԵՎ ՆԵՐՔԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները՝ ի դեմս կառավարությունների, այսուհետ՝ Կողմեր,

ելնելով Կողմերի ներքին գործերի մարմինների (ոստիկանության) և ներքին զորքերի համար կադրերի պատրաստման բարձր մակարդակ ապահովելու անհրաժեշտությունից, որը կպատասխանի ժամանակակից աշխարհի մարտահրավերներին և սպառնալիքներին, արտահայտելով տվյալ ոլորտում փոխգործակցության արդյունավետ մեխանիզմներ ստեղծելու ձգտում,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակների համար օգտագործվում են հետևյալ տերմինները.

«**ուսումնական հաստատություն**» - բարձրագույն, միջին և լրացուցիչ մասնագիտական կրթության կրթական հաստատություն, որում իրականացվում է Կողմերի ներքին գործերի մարմինների (ոստիկանության) և ներքին զորքերի համար կադրերի պատրաստում.

«**ուղարկող Կողմ**» - Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետություն, որն ուղարկում է իր ներքին գործերի մարմինների (ոստիկանության) աշխատակիցներին և ներքին զորքերի զինծառայողներին մյուս Կողմերի ուսումնական հաստատություններում պատրաստման համար.

«**ընդունող Կողմ**» - Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետություն, որն ընդունում է մյուս Կողմերի ներքին գործերի մարմինների (ոստիկանության) աշխատակիցներին և ներքին զորքերի զինծառայողներին իր ուսումնական հաստատություններում պատրաստման համար:

Հոդված 2

Կողմերը կադրերի պատրաստման գործում համագործակցությունն իրականացնում են իրենց իրավասու մարմինների միջոցով, սույն Համաձայնագրին համապատասխան, պահպանելով ազգային օրենսդրությունը և այն միջազգային պայմանագրերը, որոնց մասնակից են իրենք:

Իրավասու մարմինների ցանկը որոշվում է յուրաքանչյուր Կողմի կողմից և փոխանցվում է ավանդապահին սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին ծանուցումը հանձնելիս:

Իրավասու մարմինների ցանկի մեջ փոփոխությունների մասին Կողմերից յուրաքանչյուրը մեկ ամսվա ընթացքում գրավոր ծանուցում է ավանդապահին:

Հոդված 3

Կնքվող պայմանագրերին համապատասխան՝ կադրերի պատրաստումն իրականացվում է ընդունող Կողմի ուսումնական հաստատությունների ուսումնական պլաններով և ծրագրերով՝ հետևելով այն սահմանափակումներին, որոնք կապված են ընդունող Կողմի գաղտնի տեղեկատվության և սահմանափակ տարածման ծառայողական տեղեկատվության պահպանության, գաղտնիության պայմանակարգի ապահովման հետ:

Ուսումնական գործընթացը կազմակերպվում է ռուսաց լեզվով՝

ա) ընդունող Կողմի կուրսանտների/ունկնդիրների հետ համատեղ.

բ) առանձին (ուսումնական հաստատությունների հատուկ ֆակուլտետներում, կուրսերում,

խմբերում):

Ուղարկող Կողմի խնդրանքով ընդունող Կողմն ուսումնական գործընթացը կարող է կազմակերպել ընդունող Կողմի պետական լեզվով:

Հոդված 4

Կադրերի պատրաստումն իրականացվում է վճարովի հիմունքներով կամ ընդունող Կողմի կողմից սահմանվող քվոտաներով՝ արտոնյալ կամ անվճար հիմունքով:

Արտոնյալ հիմունքով կադրերի պատրաստման ժամանակ ուսուցման ծախսերը կատարվում են ընդունող Կողմի հաշվին, իսկ կեցության ծախսերը՝ ուղարկող Կողմի:

Անվճար հիմունքով կադրերի պատրաստման ժամանակ ուսուցման և կեցության ծախսերը կատարվում են ընդունող Կողմի հաշվին:

Ուղարկող Կողմի կուրսաստների/ունկնդիրների կեցությունը կազմակերպվում է ընդունող Կողմի կողմից սահմանված պայմաններով և կարգով:

Կադրերի պատրաստման ֆինանսական և այլ տեսակի ապահովումը որոշվում են պայմանագրերով, ընդ որում՝ ուղարկող Կողմի կուրսաստի/ունկնդրի դրամական նպաստը (կրթաթոշակը) պետք է ցածր չլինի ընդունող Կողմի կուրսաստի/ունկնդրի դրամական նպաստից (կրթաթոշակից):

Հոդված 5

Ուղարկող Կողմն ուսուցման հայտերը տալիս է ընդունող Կողմին մինչև ուսուցումն սկսելու տարվա հունվարի 15-ը:

Ընդունող Կողմը մինչև ուսուցումն սկսելու տարվա մայիսի 15-ը ուղարկող Կողմին տեղեկացնում է ուսուցման քվոտաների մասին, այդ թվում՝ արտոնյալ և անվճար հիմունքներով, նշելով ուսումնական հաստատությունները, մասնագիտությունները և տրամադրվող տեղերի քանակը՝ ըստ յուրաքանչյուր մասնագիտության:

Ընդունող Կողմը, ըստ անհրաժեշտության, ճշտում է ուսուցման համար թեկնածուների ընտրության հանձնարարականները (պահանջները):

Հոդված 6

Ուսուցման համար թեկնածուների ընտրությունը, նրանց բժշկական զննումը և ընդունելության քննությունները անցկացնում է ուղարկող Կողմը՝ ելնելով ընդունող Կողմի հանձնարարականներից և ուսումնական հաստատություններ ընդունվելու պայմաններից:

Ուղարկող Կողմը, որպես կանոն, ընդունելության քննություններն անցկացնում է ընդունող Կողմի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ ուղարկող Կողմի տարածքում: Ընդ որում՝ ընդունող Կողմի ներկայացուցիչների գործուղման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են ուղարկող Կողմի հաշվին:

Ուղարկող և ընդունող Կողմերի համաձայնությամբ ուսուցման համար թեկնածուների համար ընդունող Կողմի ուսումնական հաստատություններում կազմակերպվում են ռուսաց լեզվի և հանրակրթական առարկաների ուսումնասիրման դասընթացներ:

Հոդված 7

Կրթության մասին փաստաթղթերի, գիտական աստիճանների և կոչումների ձանաչման կարգը որոշվում է Կողմերի նորմատիվ իրավական ակտերով և այն միջազգային պայմանագրերով, որոնց մասնակից են նրանք:

Հոդված 8

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում Կողմերի այն իրավունքներն ու

պարտականությունները, որոնք բխում են այլ միջազգային պայմանագրերից, որոնց մասնակից են նրանք:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու ամսաթվից:

Այդ ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ծանուցումները ավանդապահին ի պահ հանձնելու ամսաթվից:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրը բաց է դրա դրույթներն ընդունող այլ պետությունների միանալու համար՝ նման միանալու մասին փաստաթղթերն ավանդապահին փոխանցելու միջոցով: Միացող պետության համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթը ավանդապահին ի պահ հանձնելու ամսաթվից՝ պահպանելով սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածը:

Հոդված 11

Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրությամբ, որն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածով նախատեսված կարգով, եթե Կողմերն այլ համաձայնության չեն գալիս:

Հոդված 12

Կողմերի միջև սույն Համաձայնագրի դրույթների կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի միջև՝ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 13

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ ավանդապահին այդ մասին գրավոր ծանուցում ուղարկելով ոչ ուշ, քան դուրս գալու ենթադրվող ամսաթվից վեց ամիս առաջ:

Մինչև դուրս գալու պահը համապատասխան Կողմը կատարում է բոլոր նյութական, ֆինանսական և այլ պարտավորությունները, որոնք առաջացել են սույն Համաձայնագրում նրա մասնակցության ժամանակ:

Կատարված է Յալթա քաղաքում 2007 թվականի մայիսի 25-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

Համաձայնագիրն ստորագրվել է Ադրբեյջանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Ղաշնության, Տաջիկստանի Հանրապետության, Թուրքմենստանի և Ուզբեկստանի Հանրապետության Կառավարությունների կողմից: